



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

2 - 27

19 NOV 2011

831-33

9-27

8105

Ջ Ա Ն Ի Կ

ԱՐԴԵՑԻ ԹԱԳԱԻՈՐՈՒՄ Է

Մ Է Ր

Ե Ի

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

~~.....~~

ԹԻՖԼԻՍ

Տպարան Տ. Ռոսինսկույի

1907

23.07.2013

51750

# ԱՐԴԵՑԻ ԹԱԳԱԻՈՐՈՒՄ Է

## ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

—

Զատիկ 'էր:

Մի շքեղ երկյարկանի տան վերի յարկում, ճոխ զարդարած դահլիճում, բազկաթոռի վրայ նստած էր Թիֆլիսաբնակ առաջի կարգի հարուստ վաճառական Գրիգոր Պետրովիչ Աբրահամեանցը:

Գրիգոր Պետրովիչը մի բարձրահասակ, ուռած փորով, դեմքը ճակնդեղի նման կարմրած. խնամքով ածիլած, ուռած թշերով, ալեխարն բեխն ու մազերով, Ռուսաստանի խոզի նման հաստ շիինքով, մօտաւորապէս 60 տարեկան աշխույժ մարդ էր. հազած ուներ սև առլասէ արխալուխ, մահուդէ լայն շալվար, սոկէ քանդակած նեղ դօտիկ, դօշին կախած ուներ հաստ ու երկար սոկէ մեծ ժամա-



37183-62

ցոյց. նրանից ոչ այնքան հեռու աթոռի վրայ նստած էր Եւրոպական տարազով հագնւած միջահասակ, գեղեցկադէմ տղան սև մօրուքով և խուճուճ մագերով, մօտ 30 տարեկան երիտասարդ՝ Արտաշէս Ստեփանիչը. այդպէս էր նրա անունը. Գրիգոր Պետրովիչի եղբօր որդին էր, ուսումը աւարտել էր արտասահմանում. գիւղատնտեսական դիպլոմը ծոցին որոնում էր մի լաւ պաշտօն. երիտասարդի մօտ նստած էր մօտ 25 տարեկան ճեմարանաւարտ Տիգրանը՝ Գրիգոր Պետրովիչի անդրանիկ զաւակը. նրանցից հեռու դիւանի վրայ նստած էր հասակն առած տիկին Թագուհին փառաւոր հագնուած և զարդարուած, Գրիգոր Պետրովիչի կինը:

Նրանց մօտ մտնում է մի Տաճկաստանցի առջոյգ երիտասարդ սրբ ծառայում է թէ խանութում և թէ տանը որպէս դռնապան գլուխ է տալիս ամենքին և շնորհաւորում:

—Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

—Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի, պատասխանում են ամենքը, բացի Գրիգոր Պետրովիչից:

—Աղա ջան, խնդրեմ ուճկա տւէք, երկչոտութեամբ խնդրեց Կարօն իւր տիրոջից.

այդպէս էին կոչում մշակին:

—Ի՞նչ իս տուտուց տուտուց դուս տալի. տօ, հարամզադա, էս հանգի ազիզ օրը փուղ գուղին, վուր վիկենամ ախմախ գլուխդ ջարդ ու խուրթ անիմ...

—Աղա ջան, էրեգ դուք ինքներդ խօստացաք էսօրուայ համար...

—Կորիւր էստղանցեմէն:

—Աղա ջան բաս առանց փող սուր զնամ, մի սև փարա էլ չունեմ, ազիզ օրէ, բաւքա ինչպէսս հարկաւոր լինում:

—Ասումիմ գնա, կորի, ինչ կլի չիմ չարացի, թէ չէ խօս գիղիս իմ խասիաթը. էլ չիս պրծնի իմ ձեռներմէս:

—Արի այստեղ Կարօ, ասում է Տիգրանը և տանում է միւս սենեակը հիւրասիրելու Կարօյին: Զարմանալի մարդ է հայրս, ամենեին չեմ հասկանում... միթէ այսօրուայ օրը մարդ պիտի բարկանայ, այն էլ այն մարդու վրայ, որը շնորհաւորում է զատիկը, նամանաւանդ, որ իւր սեպհական արիւն-քրտինքով աշխատած փողն է պահանջում. մրթմրթալով դուրս գնաց, Կարօյի հետ կից սենեակը:

—Գրիգուր ջան, ամութ չի, ինչի՞ իս չարանում էն խեղճ դիւրնիկի վրէն, խեղճը

էկաւ զաղիկ շնո՛ւխկելու խօ մի զարա՛յ, ան արեգա չը տւից ու անպատիւ խօսք չասից, ստօլի վրա միձրիլու մագլա՛րն էր, վուր ուշունց տվիր ու դուս արիր. — նախատեց ամուսնուն տիկին թագուհին:

— Ահա... հեգնելով մատնացոյց է անում Արտաշէսին տիկնոջ վրայ, — միր պապիրը խօսուտ չին ասի, վուր «կնգգերանց մագիրը էրգեն կուլի կօսէ, մագրամ խելքը կարճ կօսէ» էսօր էտ մօլթրէուլ մշակը իմ նօքարն է, 'իս պտիմ լայեղ անի ու ստօլի վրա մեձրիմ, էգեբա մեբաշ օմքին է գալիս իմ համսօն սովադարնեբեմէն, ան ճանանչ չինովնիկնեբեմէն քնչ կօսին, չքն ասի, վուր Գրիքուր Պետրովիչը միր նրնգիր չէ էլէ, մշակների թայ է, վուր կօսէքի հիգ հաց է ուտում, չին ասի, քիգ իմ հարցնում հը:

— Միմիայն յիմարները կասեն. զայրացած պատասխանեց Արտաշէսը — բայց խելքը գլխին և ագիւիւ մարդիկ կուրախանան և մինչև անգամ կը դովեն, որ դու հպարտ չես, որ ամենքին հալարսիրում ես. մարդուս համար միւլենայն պիտի լինի հարուստն ու աղքատը, օտարն ու ազգականը... մի վայրկեան հօգոց հանելով ընդհատեց խօսակցութիւնը և ապա

կրկին շարունակեց — ես բոլորովին քեղ չեմ կարող հասկանալ և մինչև անգամ զարմանում եմ քո վարմունքից. միթէ քո կարծիքով մշակը մարդ չէ...

Գեղեցիկ Գրիքուր Պետրովիչը ընդհատեց Արտաշէսի խօսակցութիւնը:

— Ո՛վ է ասում վուր մարդ չէ. մագրամ մշակը հարուստի լայեղ չի. բաւ վիս էկադրեբա մաշ վո՛նց կուլի վուր նուքարն ու աղէն մետի նստին ու մի սուփրեմէն հաց ուտեն:

— Էս օր զաղիկ է, խօսակցութեան մէջ խառնեց տիկին Թագուհին — ոչով ոնչիչ չեն ասի, թէ կօսէն ու ջարու ջահանդամ նրանց սարսաղ գլուխը:

— Գիտես հօրեղբայր, տաքացած սկսեց Արտաշէսը — այսօրուայ օրը ամբողջ երկրագնդի վրայ բոլոր լուսաւորված ժողովուրդը, մեծից սկսած մինչև ամենափոքր երեխան ընդունում են և կատարում այն անձնաւորութեան յարութեան տօնը, որը սորանից շատ և շատ տարի առաջ ուսուցանում էր մարդկանց՝ «սիրել միմեանց այնպէս, ինչպէս իւրաքանչիւր մարդ իւր անձը կը սիրէ» և մինչև անգամ ինքը օրինակով ցոյց տուց: Արդեօք նորա հետևողները մնացին ճշմարիտ և հաւատարիմ, ար-

դեօք, պահեցին իւրեանց վարժապետի կտակն ու պատուիրանքը որ կոչուում են Քրիստոնեայ:

— Ի հարկէ, վուր պահեցին, Արտաշէսին ընդհատեց Քրիզոր Պետրովիչը, — մինչև էսօր էլ մենք, հայ քրիստոնա Քրիստոսի բոլոր պրազնիկները կատարում ինք, ժամինք գնում, աղութիլու, պասինք պահում, տէր-տէրներուն խոստովանում ինք, սուրփ հաղորդով ճաշակուում ինք, խեչեր ինք գնում համբուրելու, օբէքին էլ դամիսթէվա, մատաղնիլ ինք մոր թում, էլ քնչ ասիմ. ամեն բանէլ կատարում ինք:

— Մեռնիմ նրա սուրփ զօրութենին. մէջ մտաւ խաչակնքելով Թագուհին -- էն վուր հայն կուլի, վուր չը կատարէ էտոնք. մլթօնի խօմ չէնք դառնալու:

— Ո՛չ, այդպէս չէ, ինչպէս որ դուք կարծում էք Քրիստոսի խօսքերը սխալ հասկացան նորա հետևողները:

— Ի՞նչիս խելքիդ զօր տալի, սխալ հասկացան վուրն է, մենակ դունիս հասկանում, դո՛ւ իս էլի խելօնքը, մա՛շ, միլ պապիլը տուտուց ին էլել էլի, քու հեսաբով...

Ո՛չ, ես խելօք չեմ միայն խօսքս Քրիստոսի հետևողների և մեր նախահայրերի վե-

րաբերմամբ եմ ասում. լսիր, նրանք ոչ թէ սխալ հասկացան կտակի միտքը, այլ մօռացութեան տւին հռչակաւոր մարդի պատւիրանքները իրենց փառքի համար: Այն ժամանակից շատերը աշակերտեցին, սովորեցին նորա պատւերները և օրէցօր հնազանդեցրին մարդկանց, իրենց կողմը գրաւելով. մարդկանց հնազանդեցնելով դարձնում էին ստրուկ և իրենց ոյժին ծառայեցնում, բռնաբար և լաղթողներ հանդիսանում. որի պատճառով սովրեցան իշխել և բարձր պահել իրենց, ծառաներից:

— Ո՛ւզումիս ասի վունց վուր ՚իս իմ վարվում իմ նուքարներու հիդ, հա...

— Ո՛չ, այլ ընդհանրապէս. փոքր լուծթիւնից չետոյ շարունակեց -- ծառաների աշխատանքով խնջուքներ են սարքում և ուրախանում, իսկ ծառայողների չարաչար տանջանքները տեսնեով անտարբեր են վերաբերվում և ուրախանում, գլարճանում:

— Ի՞նչ անաստուձնիր ին, էլե, հուզիմ նրանց անխճմտանք գլուխը. ընդհատեց Թագուհին Արտաշէսի խօսակցութիւնը:

— Բաց արին իրենց համար լարդ ճանապարհ, շարունակեց Արտաշէսը. երկրագնդի միջից քաղեցին ամբողջ երկրի հարստութիւնը,

կազմեցին Բաբելոնի աշտարակը, կազմեցրին փայլուն ոսկիներից արձաններ և շինեցին փառայեղ պալատներ իրենց ապագայ սերնդի համար, ծառաների շնորհքով, ջանքերով:

— Ա՛յ, քնչ անխճմտանք մարթիք են էլե. մաշ, վունչիչ չէին տալիս, խղճահարւած հարցրեց Գրիգոր Պետրովիչը, Արտաշէսին:

— Ծառաներին չարաչար աշխատեցնում էին, միմիայն մի պատառ չոր հացի փոխարէն կանգ արաւ Արտաշէսը և մի գլանակ հանեց արծաթէ տուփից, վառեց և սկսեց ծխել ագահաբար. Գրիգոր Պետրովիչը ինքն իրեն խօսեց:

— Ա՛յ, վ՛այ, վ՛այ, էլի ինձ վրայ են խօսում, տոնլուղ քիչ ՚իս տալի, կօսէ, աւելցրու կօսէ. դիմեց Արտաշէսին: Մաշ քու ասած խաղէիների պէս վուր ըլիմ, էն չախը խօմ սաղ սաղ կուտեն իմ փրքաչիքնիրը ու նօքարնիրը. մի օր չին թողնի, վուր սաղ-սաղաւաթ ման գամ:

Արտաշէսը կշտանալով ծխելուց, վերջին անգամ բերնից դուրս թողեց ծխախոտի ծուխը, հազաց և կրկին շարունակեց:

— Մարդիկ հասունանալով և սովորելով, այն մեծ և հռչակաւոր մարդու գաղափարը, ստեղծեցին իրենց խելքին չը հասած նոր-նոր

մտքեր, կազմեցին տեսակ-տեսակ ծրագիրներ, կանօնադրութիւններ իբրև օգտավէտ ժողովրդին, բայց հազիւ թէ գործով, այլ միմիայն պօռում էին, լոկ խօսքեր արտասանում և միևնոյն ժամանակ, շատ դժւար էր նրանցից սպասել գործունէութիւնը, որովհետև մենք մարդիկ սովորութիւն ունենք, շատ խօսել և քիչ գործել, վերջապէս հաստատում էին զանազան ընկրութիւններ, չարութեան և անբարոյականութեան դէմ առնելու, ի փառս մարդկանց պահապան հրէշտակ են հանդիսանում:

— Ինչ նընգերութիւննիր իս ասում, մաշ չեն կատարում Գրիստուսի խօսքիրը մաշ, սէր չկա՛ մեր մէջ, ընդհատեց Գրիգոր Պետրովիչը:

— Սէր, հա՛, հա՛, հա՛, ժպտաց Արտաշէսը և արհամարանքով նայեց Գրիգոր Պետրովիչի վերայ, — արդեօք սովորեցանք սիրել միմեանց, թագաւորում է Քրիստոնեաներիս մէջ «սէր և խաղաղութիւն», որ ամենահարկաւոր և անհրաժեշտն է ճշմարիտ և արդար ուսման ամեն անհատների ոյժի համար:

— Իհարկէ որ սիրում ինք մէկ մէկու, մաշ էլ վ՛ունց պիտի ըլի մէր սէրը:

— Այո՛, մենք ամենքս սովորեցանք և գիտենք սիրել միմիայն մեզ իւրաքանչիւր մարդ

իր անձը, սովորեցանք վաստակել ուրիշի քըր-  
 տինքով որքան կարող ենք դէպի մեզ քաշել  
 կրկին ասում եմ, որ երկրագնդի բոլոր հա-  
 րստութիւնով օգտուում ենք, միմիայն մենք  
 հարուստ դրամատէրերս աշխատեցնելով այդ-  
 պիսի մշակներին, որին քառորդ ժամ չի լինի,  
 որ դու այստեղից դուրս վըռնդեցիր, որ իւր  
 արգար քրտնքի պտուղն էր պահանջում, ար  
 հետաւորներին, գործակատարներին և բոլոր  
 չքաւոր դասակարգին, որոնք հագիւ-հագ կա-  
 րողանում են իրենց ընտանիքը կառուարել,  
 իսկ մենք հարուստներս, չենք մտածում  
 նրանց անտանելի և անելանելի դրութեան  
 մասին, այլ միշտ նեղացնում ենք, չարչարում,  
 տանջում, հայհոյում ամենալիրը խօսքերով  
 և մինչև անգամ նրանց չնչին ուճիկից կրտ-  
 րում, լիովին չենք վճառում...

Միթէ ձեր կարծիքով նշանակում է, որ  
 մենք Քրիստոնեայ ենք, որ պաս ենք պա-  
 հում, տօներ կատարում, եկեղեցի գնում ա-  
 ղօթելու, ինչպէս դուք էք ասում. իսկ այն  
 ողորմելի մարդկանցից՝ տգրուկների նման ա-  
 րիւն ծծում, որոնք իրենց թող ձեռներով աշ-  
 խատում են, արիւն-քրտինք են թափում, չար-  
 չարում, բռնակալ խօզէլիների համար. իսկ

մենք խաղէլիներս, մեր ծառայողներին, մին-  
 չև անգամ մարդու տեղ չենք ընդունում,  
 լայեղ չենք անում, որ ողջունի և բարևի վո-  
 խարէն, մենք էլ ողջուն տանք և Աստուծոյ  
 բարի ասենք. դրանով մենք սրբապղծում ենք  
 Քրիստոնէութիւնը. ամօթ է նամանաւանդ քեզ  
 հօրեղբայր, որ ասես հայ-Քրիստոնեայ եմ:

Վարւած և այլայլւած, Քրիզոր Պետրո-  
 վիչը բացականչեց:

— Գժվիլիս այ տղայ, ընչեր իս ասում,  
 տաքութէնի մէջ խօս չիս ուշիւ անում.  
 խաչակնքում է Սրտաշէտին.— խեչեմէն կուլիս  
 վուրթի, էրկու ջուխտ մումիրը վառի, մէյ-  
 դնի սուրփ Գեուրքին, լաւ կու դառնաս:

Բայց Արտաշէսը այնպէս էր վառվել, որ  
 Քրիզոր Պետրովիչի խօսակցութիւնից ոչ մի  
 բառ չը հասկացաւ, նորից մի գլանակ հանեց  
 և սկսեց ծխել մի քանի անգամ կուշտ ծխե-  
 լուց յետոյ, նորից շարունակեց համարձակ և  
 տղու ձայնով:

— Ահա, մենք և մեզ նման շատ շատերը,  
 իհարկէ, միայն բուրժուայ դրամատէրեր բնու-  
 թիւնից տւած, բոլոր բարիքներով լի է մեր  
 տունը և ճոխ է մեր սեղանը, ունենք զանազան  
 համեղ կերակուրներ և թանգագին արտա-

սահմանեան խմիչքներ, վսեմաբար քայլում են թաւշեա ու մետաքսէ կերպասով հագնւած մեր տիկնայք ու օրիորդներ, որոնց մարմինը զարդարւած է թանգագին դոհարներով և ոսկէ իրերով և դիմաւորում են ուրախ ու զւարթ հոչակաւոր անձնաւորութեան տօնին և շնորհաւորում ենք միմեանց, սուրբ յարութիւնը. որ քարոզել է՝ «Սիրեցէք միմեանց ինչպէս ձեր անձը, դուք ամենքդ, եղբայրներ էք, չը կայ ձեր մէջ ոչ փոքր և ոչ մեծ դուք ամենքդ մէկն էք:

— Վուր ասում իմ գփվիլիս, տօ ախար ընչէր իս ասում, հասկանում եմ, ինչա բիձու տղիրք ինք թէ գէգիգի. վուր մէկինք կօսէ. էլ վունց մինձ կայ, վունց պստիկ, աբա մաշ էգ խելք է, մաշ աւտալու բանէ:

— Սհա, իսկ և իսկ այդ է, որ մենք, հարուստներս, Քրիստոսի խօսքերը անտեղի տւինք, տես մեզանից ոչ հեռու, որ կից է մեր փառահեղ տանը, մեր հարեւանները և նոյն իսկ մեր ծառաները ու սպասաւորները, որը սոված, որը բօրիկ, հոգսերից մաշւած մտքա մուրներ, որ մինչև անգամ կօրցրել են մարդկային ընդունակութիւնը, որ զանազանեն թեփը հացից, բայց կրկին արեաբար քարշվում

են խմբերով, որոնց կիսամերկ մարմինը ծածկւած է կեղտոտ ցնցոտիներով, նրանց հանգստանալու և պատուարելու տեղ միայն կիսաքանդ, կեղտոտ բնակարան է, ահա այդ խեղճերը, քաղցած ու ծարաւ, ուրախութեամբ շնորհաւորում են միմեանց սուրբ յարութիւնը, իրենց կարողութեան չափ հիւրասիրում են միմեանց, սլ ինչ ունէ, բայց դու, հօրեղբայր, այնքան անքաղաքաւարի և անտարբեր վար՞ վեցոր, որ մինչև անգամ քո ծառային չը հիւրասիրեցիր, այդ քեզ վայել չի:

— Քանի աղաս, կոտրած ջաղաց խօմ չէս, բարկացած ասեց և ոտքի կանգնեց սկսեց յեդ ու առաջ քայլել.— էսօր իմ գլխին մի խաթաց պրտի բերի. դահլիճի մէջ տեղը կանգնեց և ուղիղ Արտաշէսի աչքերին նայեց, լուռ մի քանի վայրկեան, վերջապէս շարունակեց, — քիզ ասում իմ ախպէր ձեռը վիկալ ինձմեն... աւելի լաւ կօնիս որ տէր-տէր ան վարթապիտ դառնաս ու ժամում կարթաս էտ քո տուտուց քարուզնիր. սկսեց նորից քայլել զայրույթից:

— Մի բարկանար հօրեղբայր, ես ինչ որ խօսում եմ բոլոր Քրիստոսի ասած քարոզներնա, որ դու յիմար ու տուտուց ես անլանում ինչպէս որ նկատում եմ, դու չես հասկանում

կամ ուղղակի ասել, ձեռնտու և օգտաւէտ չէ քեզ և քեզ նման հարուստներին:

— Ի՞նչ, վու՛նց թէ չեմ հասկանում ինչա աշխարհումս հաց եմ ուտում թէ խոտ, հայ գեղի Գրիքուր Պետրովիչ քեզ էլ վու՛ր փրժնում ի՛ն:

— Այո՛, չես հասկանում, որովհետև վնասակար է քեզ:

Մտնում է Տիգրանը նկատելով Արտաշէսի վիճաբանութիւնը, համոզեցուցիչ ձայնով դիմեց վերջինին:

— Զարմանալի մարդ ես եղբայր, վիճելու ժամանակ ես գտել և ում հեռ ես գործ բռնում, մի՛թէ կարող ես քո խրատներով համոզել ծերունիներին. շուր գալով հօր կողմ,

— Իսկ դու, հայրիկ, ինչ կարիք կայ կուռել, վիճել և բարկանալ, ամօթ չէ որ այսօրուայ օրը խռովում էք և գայրանում,

— Վա՛... վու՛նց թէ չը խռովիմ, էս մեր պարուն Արտաշէսը շատ զօր է տալիս իրա խելքին, տեսնինք ինքը վու՛նց այլաի ապրի միր քաղքումը, սա խօմ զագրսնիցա չի, սա միր ազիզ Կավկազի սիրտնէ, Թիփլիզնէ, թիփլիզ, սրա հիմք գցողին մատաղ ըլիմ ՚իս:

Արտաշէսն և Տիգրանը ժպտացին. Թա-

գուհին մօտեցաւ ամուսնուն, բռնեց նրա ձեռքից, քաշեց դէպի կիսաթախտ և նստացրեց:

— Նստի, գենացվալոս Թաքուամ, մի չարանա շենի ճիրիմէ, դամբլա չը նընգնիս, ինչիս նրանց խօսքերին անկանճ դնում ջահլնիր ին, նրանց արի՛ւր դամարնիրում տրտինգ է տալիս ու խօսեցնում է:

— Վա՛. վո՛ւնց թէ չը չարանամ, արինս գլուխս խփեց, աչքիրս մթնեց էն թավուր սուտ սուտ խօսքիր է ասում:

— Սխար դու ինչի ի՛ս նեղանում, սուտ է խօսում թէ դուրթ, քեզ ու գօրա թնչ կայ. հանգստացնում էր կինը:

— Վա՛, դուն էլ բան իս ասում, վո՛ւնց չը նեղանամ, ինքը միթօմ շատ խելօնք է հիմի ինձ է խրատ տալի. դրա համա վու՛նց վուր ինքն է ասում, հարուստն ու քեսիրը մէկ է կօտէ, մինձ ու պուճուր չը կայ կօտէ, աբա էդ խելք է, թոկից փախած գիժն էլ չի ասի էտունք. ասում իմ էլի, վուր խելքին զօրէ տալիս:

Վերջին խօսքերի վրայ նորից տաքացաւ Արտաշէսը և սկսեց:

— Ոչ թե՛ խելքիմ քո պարթ տալիս, այլ ճըմարտութիւն եմ խօսում ձեզ հետ. ինչո՛ւ ես նեղանում ասացէք խելքեմ, մի՛թէ նախախնա-

37/83-62



մութիւնը հարուստն ու աղքատ մարդկանց,  
միատեսակ չի ստեղծել:

— Իհարկէ որ մարդը մէկ է. համա հարուստին հարուստ է ստեղծել, իսկ աղքատին աղքատ, էտ ով չը գիտէ, պատասխանեց պարզութեամբ Թագուհին:

— Մայրիկ, արդեօք հասկնում ես, քնչ ասեցիր. մօր խօսքը կտրեց Տիգրանը:

— Ինչ է ասում. չես լսում. Տիգրանին պատասխանեց Գրիգոր Պետրովիչը. 'իս վուր հարուստ չը լէի դուք էհենց լաւ կու ապրէիք, հարուստի վուրթին հարուստ կուլի, ու լաւ կապրի. ախկտի վուրթին ախկատ ու չարքաշ կինք կուեննա. ծիծաղելով արտասանեց վերջին խօսքեր ինքնաբաւական:

— Այո, հայրիկ. ճշմարիտ ես ասում, բայց մարդկութեան կողմից մենք եթէ լաւ նայենք միւսնոյն ենք, հարուստն ու աղքատը, որովհետեւ Աստուծոյ առաջ մենք միւսնոյն ենք, միմեայն տարբերում ենք քաղաքաւարութեամբ, բարոյականութեամբ և ազնւութեամբ:

— Հա, քու հօրն օղորմի, առանց հարստութիւնը քու ազնւութիւնն ու քաղաքաւարութիւնը հաց կու տան չէ... Արտաշի հիգ վուր ըլիս, լաւ լաւ բանիւր կու սովրիս, ալի

ասում իմ ախպէր, վարթապետնիր դարէք ու գնացէք ժամում ու խալխին քարոզեցէք, ինձ ձեր տուտուց խրատնիր ու քարոզնիրը հարկավուր չեն, 'իս վունց վուր վարիլիմ ախպէր էնենց էլ կու հնձիմ:

— Ասացէք խնդրեմ, մենք ինչո՞ւ ենք լաւ ապրում, իսկ աղքատը վատ. հարցրեց հօրը հետաքրքրութեաբ:

— Հա, հա, հա էտ էլ չիս գիդի, ծիծաղելով ասեց Գրիգոր Պետրովիչը. մաշ էլ ինչի էիր եղղադա սովրում վուր էտ էլ չիս գիդի:

— Խնդրում եմ, հայրիկ, բացատրես քո կարծիքները, մեր և աղքատների վերաբերեալ:

— Վուրովհետեւ Աստուածանից վիճակաւ է վուր մինք հարուստ ըլինք, մագրամ մշակները ու բանուրները աղքատ. պրծաւ գնաց, սրա գիդնալն ինչ մինձ փիլիսօփուսիթին է. ինքնագոհ և պարծենալով պատասխանեց:

Արտաշէս և Տիգրանը ժպտացին:

— Ոչ, հայրիկ, շատ սխալ էք դատում, մենք հարուստներս, չենք թոյլ տալիս, որ նրանք, աչխնքն, աղքատներն էլ մի քանի կո պէկի տէր դառնան:

— Վունց թէ հարուստներս, չինք թողնում, ինչ է նրանց ձեռնեմէն բռնում ինք,

Թէ խլում: չեմ հասկանում ախպէր:

— Այ բացատրեմ թէ ինչպէս, խնդրեմ հայրիկ ուղիղն ասա՝ միթէ բոլոր հարստութիւն, ճօխ և փառահեղ բնակարան, որ Աստուծոյ տաճարի նման զարդարեալ է. համեղ կերակուրներ և ընտիր գինիներ, միմիայն դրամատէր և զօրեղ բռնակալներին է պատկանում. իսկ թոյլ և չքաւորը, չոր ու ցամաք հացի և մաքուր բնակարանի կարօտ լինի և հազար տեսակ կրակ ու տանջանք պիտի թափւի, որ սովամահ չը դարնան, խեղճերը ծանր լծի տակ գիշեր, ցերեկ, պիտի աշխատեն, որ կարօտ չը մնան, ամենօրեայ մի պատար չոր հացի համար. ինչ կասես Արտաշէս. ուղիղ եմ ասում թէ չէ:

— Այո այդպէս է, պատասխանեց վշտացած և կազնեց մի վայրկեան և շրջահաց դահլիճի ամեն կողմ, ապա շարունակեց, ձեռքով ցոյց տալով բոլոր հարստութիւն: Ահա հարստի ապարանքը լուսաւորեալ է ջահերով, նրանց սեղանին սպասաւորում են ծառաներ և աղախիններ միթէ հարստի ճակատին դրօշմեալ է ցնծութիւն, ուրախութիւն, վայելչութիւն և երջանկութիւն. իսկ հարստից բաժանեալ, կից ողորմելի խրճիթներում, ուր

ճրագի հոգեւոր մնացորդի փայլփլոցը, որ հազիւ-հազ լուսաւորում է բնակիչների քայքայեալ ու թշուառ կերպարանքը աղօտ լոյսով, չքաւոր դասակարգին մնացել է միմիայն չարչարանք, լաւիտենական տանջանք և դառն քրտինք թափել, որ կերակրվեն մի կտոր ցամաք հացով և միշտ դող ու սարսափի մէջն են լինում որ միւս օրեայ համար ոչինչ չեն ունենայ, եթէ Աստուած մի արասցէ որ ընտանիքի մի աշխատաւոր անդամը հիւանդանայ:

— Վուրով հետև խիլք չունին, վունչիչ չին հասկանում, միջամտեց Գրիգոր Պետրովիչ:

— Հը... չեն հասկանում. այո, չեն հասկանում, թշուառները այդպիսի տագնապալի միջոցին, հասնում են այն կէտին, որ մինչև անգամ մօռանում են իր մարդ լինել և կորցնում են մարդկային արժանաւորութիւն: Մարդս սուղ, նեղ և ծայրահեղ ժամանակին մօռանում է, որ իւրաքանչիւր մարդ ծնեալ է, ազատ և անասուններից գերազանց, խեղճերը հոգսերի մէջ խրեալ մինչև որկորը, չէ համարձակում բարձր խօսել և բողոքել իր մարդկային իրաւունքները պաշտպանելու առաւելլապէս կեանքի, ապրուստի և ազատութեան համար, նա թուլանում է քայքայուած

իր ոյժից վեր ծանր աշխատանքի տակ ամեն մի կտոր հաց վաստակելու համար, նրանք առնում են հացի վաճառք նոյն իսկ արեան գնով, որ և թափում են դառն քրտինք և ջերմ արատասունքի աղի կաթիլներ. լուց և ուղիղ Գրիգոր Պետրովիչի երեոին նանց:

— Մաշ առանց չարչարանքի ու աշխատանքի հացը ո՞վ է ուտում, ուզումիս վուր արխէին ձեռքերը ջիբը դնին ու բուլվարնիրում սէիր անեն էնենց արխէին հաց ուտի՛ն, էտունք վեր մօգարթվիս, 'իս կի չիմ ուզում համա չի ըլում ինչ կլի դուքան չը գնամ օրէկան հարար ջեր սուտ չասիմ, էրթում չուտիմ արուտ. վանից ինչկլի կէս գիշիը տանջվիմ, չարչարվիմ, մի մուշտարին խափիմ, մէկէլից չը գուղանամ մի սիվ գրօշ էլ ոչով ինձ չի բախշի, մաշ, վոննցիս ուզում ա՛յ 'իս վուր մի ծերացած մարդիմ, աշխատումի՛մ, վուր օղուշաղի ու խալխի մօգ սիվ իրես չը դուս գամ, որ օչով չասին թէ Գրիգուր Պետրովիչը ինչ հանգիէ ապրում. ձիը արիվն իմ ասում իրիգնիրը վուր տուն իմ գալի դուքնից էնէնց բեզրածիմ վուր էլ չիմ իմանում թէ մէկէլ օր կանամ դուքան գնալ վուր արուտուր անիմ, համա ինչ անիմ վուր չը գնամ, չի ըլի, մաշ փուղ

դադիլ վունցիս ուզում հիշտ խօմ չի:

— Փող աշխատել հեշտ չէ, ճիշտ ես ասում, հայրիկ, բայց մարդս պիտի հալալ, առանց խաբելու և արդարութեամբ պիտի վաստակէ:

— Հիմիկալ ժամանակին ովի աշխատում հալալութիւնով աբա մի տէհնիմ թէ կուզ մի մարդ շանց տու միր քախքումը:

— Հալալ աշխատողներ միմիայն ծառաները, մշակները, բանւորները և արհեստաւորներ են. միջամտեց Արտաշէսը:

— Աբա, դուն վուր, դօխտուր մարդ ես զազրանիցս ման էկող էդպէս ես ասում, էլ ինչ ասիմ ախպէր, քու ասած մարթիք ի՛ն հալալ ու արդար աշխատողները, ուսում չունին, կուպիտ խալխին, մարթավարի խօսալ չին գիդի եփ վուր ուզումիս խրատիլ, գիլի հանգի ին վրէն պրծնում վունց լաւին հասկանում, վունց վադը, նրանք վունց սէր գիդին, վունց Քրիստուս, վունց Աստուձ, վունց միխքն ու վունց էլ վարձքը. աբա ընչիր իս ասում, դրանց հարկավուր է, էշի հանգ բանցնել ուրիշ վունչիչ:

— Այո՛, նրանք անուսում և տգետներ են, պատասխանեց Արտաշէսը. որովհետև նրանց

ճնողները ուսումնարանում չեն տուել կրթու-  
թեան և զարգացած չեն, խեղճ ոգորմելիներ երբ  
և որտեղից պիտի գիտենան և յիշէն այն սուրբ  
և արդար վարժապետի մեծ պատւիրանքը, որ  
կոչուում է «սէր» երբ ինքը գիշեր ցերեկ ան  
հանգիստ հեծում է և չարչարուում մի կտոր  
չոր հացի համար, որ սովամահ չը դառնայ թէ  
ինքը և թէ իր գերդաստունը, արդեօք միջոց  
կամ ժամանակ ունեն որ սովրէին նրա պա-  
տւիրանքները. սովրելու համար հարկաւոր է  
«ոսկի» իսկ բանւորը որտեղից պիտի ճառի այդ  
փայլուն պաշտելին. մարդ ուսումից զուրկ  
կորցնում է մարդկութիւն. դառնում է անբան  
անասունի նման, նոցա հետ մօռանում է նա  
և Աստուածապաշտութիւն և ընկերասիրու-  
թիւն շատերը նոյն իսկ հափշտակող և գիշա-  
տիչ աւազակներ են դառնում, ոմանք էլ ան-  
բարոյական կեանք վարում և իրենց առօր  
ոյժեր քայքայում չար ճանաչարհի վրայ.  
ասում ես թէ «կոպիտ են, էշի նման  
պիտի բանեցնես, եթէ խրատում ես գալլի  
նման յարձակում են», այո անուսում և տան-  
ջւած մարդ դառնում է վայրենի գազան. այս  
էլ լաւ պիտի գիտենաք որ վայրենացած մարդ-  
կանց սրտի մէջ սէրն և խիղճը չի կարող բոյն

դնել, բայց ով է մեղաւոր, եթէ ոչ մենք հա-  
րուստներս, որ չենք աշխատում չքաւոր դա-  
սակարգի երեխաններին ուսում տալ և կրթել  
որոնք չեն կարող ուսումնավարձ վճառել և  
ուսման համար բոլոր պիտոյքներ ձեռք բերել:

— Ախքատնիլի համա խօսմ անփուլ շկօ-  
լէք կան 'իս ինչ գիղիմ վանքի շկօլէն մէկէլ  
բարիգուրձական նընգերութին ին ասում մաշ  
չին օտկում:

— Այո, կան... բայց ինչ օգուտ միթէ  
կարող են բոլոր չքաւորներին օգնել, ընկե-  
րութեան անդամներից կան այնպիսիներ ո-  
րոնք օգնում են ոչ այնքան չքաւորներին,  
որքան որ լցնում են իրենց զրպաններ և ի-  
րենց ազգականներին և ծանօթներին են օգ-  
նում միմիայն:

— Իու ինչ գիղես, իքնեբա օտկում ին  
ուրիշներուն էլ:

— Ես գիտեմ մի չքաւոր այրի կնոջը որ  
չորս զաւակի մայրն է, գիմել է մի քանի ան-  
գամ բարեգործական ընկերութեան անդամին  
և խնդրել է օգնութիւն, նմանապէս մի քա-  
նի անգամ գիմեց նա ևս սւսումնարաններում  
որ ձրի ընդունէին գոնեա միակ մեծ զաւակին  
որը միւսներ դեռ մանր երեխաներն են, բայց

մանն և անտարբեր պատասխան են տւել՝  
 «Գնա աշխատիր մենք չենք կարող օգնել, քեզ  
 նմանները շատ շատեր կան, որ մէկին օգնենք  
 գրամարկղում փող չըկայ» . .

— Կնիկարմատը ուր պըտի գնա բանիլու  
 մենք խօսանիր ու նեմենցնիր չինք. միջա-  
 մտեց տիկին Թագուհին:

— Քիչ տեղ կայ, հօրէն մեր հարևան  
 օղորմած հօքի ուստա Ղազարի կնիկ Կատօն  
 պապիրոսի փափրիկում չի բանում, հօրէն Գէ-  
 վոյի աղջիկ Հռիփսիմէն էլ կամփետի փափրի-  
 կումն է բանում, նրանք հայեր չին. կնոջ  
 խօսքը կտրեց Գրիգոր Պետրովիչը:

— Հայրիկ, գիտէք թէ ինչպէս են տան-  
 ջւում ու չարչարում գործարաններում. աշ-  
 խատաւոր իգական սէռին որ նայէք կը կարծեք  
 թէ նրանք բանտարկւածներն են, այնպէս են  
 մաշտած և ոյժերից քայքայւած և որքան, որ  
 աշխատեցնում են, նորա ութերորդ մասը, յա-  
 զիւ են վճառում ուճիկը:

— Վուրթի, ով վուր ուզում է հաց ու-  
 տիլ պըտի չարչարվի մաշ. վուր ասումիս  
 փուղը քիչին տալիս մաշ խազէինը ինչ շահ  
 պըտի ունենայ էնքան փուղ է մանսպ գրիլ  
 փափրիկում մաշ նրա փուղը պրացէնտ չունէ:

— Այն պրացէնտ պիտի ունենայ, բայց ոչ  
 այնքան որքան որ Փարբիկանտներն են վաս- ✓  
 տակում խեղճ բանւորի ոյժով:

— Լուռ կաց եղբայր, գրամատէրները ի-  
 րենց աշխատողների այսինքն բանւոր ծառա-  
 յողներ վրայ այնպէս են նայում ինչպէս որ  
 մի անբան արարկայի, գսրծիքի կամ լճկան  
 անասունի վրայ, իրենց հարստացնելու համար  
 ստիպում են աշխատեցնել շոգի, էլէքտրոն և  
 այլ տեսակ տեսակ մեքենաների վրայ, խեղճ  
 և թոյլ մշակներին. խեղճ բանւորը օրէկան  
 պարէն հայթայթելու և սովից ու կարօտու-  
 թիւնից ազատելու համար ստիպւած սովրում  
 է ղեկաւարել մեքենաններ և զանազան գոր-  
 ծիքները, նրանք աշխատում են մեքենաների  
 վրայ մի օրւայ ընթացքում այնքան, որքան  
 որ առաջ հարկաւորում էր այդքան գործի  
 համար տասնեակ, հարիւր և նոյն իսկ հազա-  
 րաւոր բանող հմուտ ձեռքեր և ուժեղ բա-  
 զուկներ:

— Մաշ վուր ասում էիր թէ, մաշինէք  
 ու էլէքստրօնը խելօնք մարթիքն ին մօղոնիլ  
 էտ է խելօնքութինը... վուր մէ մարթը բա-  
 նի և հարիւր ու հազար մարթիք պարտապ սա-  
 րապ ման դան ավերիւմ ախպէր լաւ բաբաթի

մարթիքին էլել:

— Այդ, բոլոր մեքենաներ հնարեցին, ոչ թէ նրա համար, որ աշխատաւոր մարդկանց թիւը պակասեցնէին, և զրկէին՝ աշխատելուց, պիտի թեթեւացնէին նրանց չարաչար տանջանքներ, և թոյլ տային ճնւած ժողովրդին հանգստանալու, որ կարողանային սովրել այն մեծ վարժապետի խրատները, որ մենք այսօր տօնում ենք. գնային այն շաւղով և արդար ճանապարհով, որ կատարելագործւի նրա կտակը մարդասիրական ուսումն տարածւէր ամբողջ մարդկութեան մէջ. կամ ուղիղն ասած յօգնած բանւոր-մշակները հանգստանան, զըւարթանան և զբաղանութեամբ պարապեն, որ իրենց քայքայւած յոյժ և մարմինը կազդուրեն, ալ միևնոյն ժամանակ ստիպում են աշխատեցնել. նրանց դարձրին նոյնպէս մի զործիք իրենց ձեռքին ինչպէս և ուրիշ բոլոր անշունչ գործածելի պարագաններ և գործիքներ, ցանկանալով առաւել չափազանց հարստութիւն զիզեն:

— Ամեն մարթ էլ, չալիշ է դալի, վուր հարուստանայ դուն որ ըլիս, չիս ուզի, վուր շատ փուղ ունինս:

— Ես, հակառակ չեմ, որ չուզենամ հա-

րստութիւն աւելացնել, բայց ոչ բռնաբարութեամբ և խաբեբայութեամբ խլել, զրկել այն մարդկանց վերջին կօպէկը, որոնք ինձ համար աշխատում են և հաց են տալիս:

— Իս չիմ հասկանում, ինչ խաբէութիւն, զայլութիւն և ես ինչ գիղամ բռնութիւն է. ան թէ չէ տօնուղ վուր տալիսիս մաշ ում համա պըտի բաւի, չէ որ քիզ համա:

— Բռնաբարութիւնն այն է որ բռնի կերպով ստիպում ես աշխատել, հազար տեսակ սպառնալիքներով վտխեցնում ես անպաշտպան բանւորին, իսկ խսբելութիւնն էլ այն է, որ փաղաքշական և քաղցր խօսքերով, խաբում, խոստանում ես շատ ու շատ բարիքներ և բարերար մարդես ձեանում բանւորներիդ մօտ, մինչև որ հարկաւոր է քեզ, իսկ երբ որ այլ ևս այնքան հարկաւոր չէ որքան առաջ, դըրժում ես խօստմունքներ և դուրսես վաճուղմ քեզ և քո գերդաստանի համար աշխատող բանւորին, կամ պակասեցնում ռոճիկը առանց այն էլ ստացւածը, չնչին գումարն է որ չի բաւականանում թէ իրեն և թէ իր ընտանիքին, խեղճը ուր գնայ կամայ ակամայ մնում է պակաս գնով, եթէ չը ծառայ է խաղէլինի առաջարկած ռոճիկով և ուրիշ խաղէլինի մօտ

էլ աշխատելու տեղ չունենայ, թշուառ քաղ-  
ցած ու ծարաւ պիտի մնայ իր ընտանիքով:

— Հալբաթ աւելի արժողութիւն չունի,  
վուր խաղէինը պակսիցնում է ու չի ավելցնում  
թէ չէ, ինչի չի ավելցնի հա:

— Հօրեղբայր, ճշմարիտն եմ ասում որ ոչ  
մի դրամատէր և բուրժուա չէ ուզում, որ իր  
ստորադրեալ ծառայողները փոքր ինչ ապահո-  
ւած լինեն, որպէս զի լաւ ապրէն. այդ ինքդ  
քաջ գիտես, էլ ինչ կարիք կայ երկար ու բա-  
րակ խօսել, մեր վիճաբանութիւնը միմիայն  
ջուր ծեծել կը լինի:

Ոտքի կանգնելով, դուրս գնաց միւս սե-  
նեակը Տիգրանի հետ միասին:





թիվ 204

1-1

1.2

50

« Ազգային գրադարան



NL0368184

51750

